ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՆԳԼԵՐԵՆ

(առարկա)

ԹԵՄԱ՝ <<Խմբային աշխատանքի կիրառումը օտար լեզվի ժամերին>>

Կազմեց՝ Միլենա Նավասարդյան Կարոյի

(անուն, ազգանուն, հայրանուն)

«Կապանի Հ. Ավետիսյանի անվան հ. 9 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Թագուհի Ղոնյան

«Կապանի N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(Վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1 Խմբային աշխատանքի կազմակերպումը օտար լեզվի դասերին. 5

1.1Խմբային աշխատանքը որպես համագործակցային ուսուցում. 9

Գլուխ 2 Խմբային աշխատանքի ձևերը. 12

2.1 Խմբային աշխատանքի առավելություններն ու թերությունները. 16

Գլուխ 3 Խմբային աշխատանքի հնարավորություններն ու գործառույթները. 18

Գլուխ 4 Խմբային աշխատանքի գնահատումը. 19

Մեփական հետազոտություն. 20

Եզրակացություն. 22

Հավելված. 23

Օգտագործված գրականության ցանկ. 26

Ներածություն

Կրթության գործունեության մոտիվացիայի խնդիրը մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է։

Բարձր տեխնոլոգիաների դարաշրջանում շատ է կարևորվում օտար լեզուների իմացությունը՝ հատկապես անգլերենի իմացությունը։ Համագործակցային ուսուցումը, որը կրթական պետական պահանջներից է, համարվում է այլընտանքային մանկավարժական մոտեցում և կարող է իրականցվել տարբեր եղանակներով՝ խմբային աշխատանք, խաղ, դերախաղ և այլն։ Տարբեր ժամանակներում խմբային աշխատանքը ունեցել է լայն կիրառում, սակայն ժամանակի հետ դրա պատկերացումները փոխվել են։

Խմբային աշխատանքը, որի հիմքում ընկած է համագործակցային ուսուցումը, ենթադրում է համագործակցային մշակույթ։ Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, ակտիվ կիրառվում է։ Այս ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ։ Համագործակցային ուսուցման ընթացքում կիրառվում են համագործակցային ուսուցման տեսակները՝դրական փոխկապվածություն, դեմ առ դեմ խթանող փոխազդեցություն, անհատական հաշվետվություն և պատասխանատվություն, սոցիալական հմտությունների ձեռքբերում և խմբային գործընթաց։ Համագործակցային ուսուցումը կարող է ձևավորել խմբերի տեսակներ՝ֆորմալ, ոչ ֆորմալ և հենակետային խմբեր։

Խմբային աշխատանքը՝ իր մեթոդների մեծ փնջով արդյունավետ ուսուցման ձևերից մեկն է, որը աշակերտների մոտ ձևավորում է կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են համագործակցության կարողություն, խմբում մաս լինելու գիտակցում և խմբի համար պատասխանատվություն ձեռք բերելու, իրար կարծիք լսելու և հարգելու կարողություն։

Խմբային աշխատանքն ունի մի շարք դրական կողմեր. այն ակտիվացնում է աշակերտներին, բարձրացնում նրանց հետաքրքրասիրությունը կատարվող աշխատանքի նկատմամբ։

Այսպիսով՝ օտար լեզուների դասավանդման մեջ խմբային աշխատանքը զարգացնում է սովորողների բանավոր խոսքը, ձևավորում է ճիշտ քերականական կանոնների կիրառում՝զարգացնում գրավոր խոսքը, հարստացնում բառապաշարը, ընդլայնում մտահորիզոնը և ձևավորում համագործակցություն։

Գլուխ 1 Խմբային աշխատանքի կազմակերպումը օտար լեզվի դասերին

Բոլոր ժամանակներում խմբային աշխատանքը օտար լեզվի դասերին համարվել է արդյունավետ միջոցներից մեկը, քանի որ այն նպաստում է սովորողների հաղորդակցական և լեզվական հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: Խմբայի աշխատանք կարելի է կազմակերպել ոչ միայն քերականական և բառային գիտելիքների ամրապնդման համար, այլ նաև տեքստերի հետ աշխատելիս՝ զարգացնելու դրանց ընկալման հմտությունները: Նոր թեմատիկ և ակադեմիական տեքստերի ընկալման դեպքում խմբային աշխատանքը ավելի արդյունավետ է, քանի որ այն նպաստում է հաղորդակցական և մասնագիտական հմտությունների զարգացմանը:

Ժամանակի հետ խմբային աշխատանքի մասին պատկերացումները փոխվել են, ուստի պետք է ուսումնասիրել բնագրերը, հիմնական սկզբունքները, առանձնահատկությունները, խմբային աշխատանքի առավելությունները և թերությունները: Ժամանակակից հասարակության պահանջներն են՝ ձևավորել ոչ միայն կրթված և գրագետ անհատներ այլև հմտություններ և կարողություններ ունեցող անձինք, ովքեր կարող են համագործակցել խմբում:

Արդյունավետ խմբային աշխատանք կազմակերպելու կարևոր խնդիրներից մեկն այն է, որ ուսումնառության գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները, այլ ոչ թե նրանց մի մասը: Խմբում աշխատանքի մեջ ընդգրկվեն տարբեր կարողությունների աշակերտներ և նույն կարողություններ ունեցող աշակերտներ: Այդ ամենը ինքնաբերաբար չի լինում և անհրաժեշտ է, որ ուսուցիչը աշխատանքի ընթացքում ստեղծի համապատասխան ցանկալի, հետաքրքիր միջավայր և ապահովի անհրաժեշտ պայմաններ. ձևավորել հետաքրքրություն առաջացնող կրթական միջավայր և ստեղծել այնպիսի մարտահրավերներ և բարենպաստ դրդապատճառներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործընթացին: Այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը:

Գիտելիքների ձեռքբերումը և դրանց գործնական կիրառումը, կապը իրականության հետ, հնարավորությունների արտահայտումը և շատ այլ արժեքների նպատակային օգտագործումը մեծ հնարավորություններ են ընձեռնում սովորողին ինքնահաստատվելու և ինքնարտահայտվելու համար:

Խմբային աշխատանքը թերևս համագործակցային ուսուցման կարևոր տարր է հանդիսանում: Խմբային աշխատանք կազմակերպելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի հետևյալ ռազմավարությունները և միայն դրանք ճիշտ կազմակերպելու դեպքում կհասնի հաջողության: Այդ ռազմավարություններն են՝

1. Հստակ մշակել խմբային աշխատանքի նպատակը և վերջնարդյունքները (այն պետք է լինի նպատակային)

2. Նախապես նշեք գնահատման ձևը և թե ով է գնահատելու՝ խմբերը միմյանց, թե՞ ուսուցիչը

3. Ներկայացրեք ձեր դերը

4. Դասարանը բաժանել խմբերի՝ հաշվի առնելով դասասենյակի կառուցվածքը

5. Աշակերտներին ներկայացնել առաջադրանքները՝ հնարավորինս պարզ ու հասկանալի

6. Ստեղծել դրական, բարյացակամ և հետաքրքրող միջավայր (կարևոր է աշակերտների հարգանքը միմյանց նկատմամբ)

7. Խմբային աշխատանքի ընթացքում առաջնորդվել արդարության, այլ ոչ հավասարության սկզբունքով

8. Պատասխանել աշակերտների հարցերին

9.Առաջադրանքը պետք է լինի ոչ պարզ՝ մարտահրավեր նետող, հետաքրքիր

10. Առաջադրանքին հատկացնել բավարար ժամանակ

11. Հետևել աշխատանքին, բայց չմիջամտել

Խմբային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար, քննարկումներ անելու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ խմբային ուսուցման դեպքում հաջողության բանալին ուսուցչի խմբային աշխատանքի պլանավորումն է: Ուսուցիչը պլանավորում է ոչ միայն բովանդակությունը, այլ նաև աշակերտների գործողությունները և վերջում իրականացնում գնահատումը:

Խմբային աշխատանքն առավել արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը: Յուրաքանչյուր լավ կազմակերպված խմբային աշխատանք մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա: Խմբային աշխատանքը խթանում է սովորողների.

- Միասին աշխատելու կարողությունը
- Համագործակցելու հմտությունը
- Միմյանց լսելու ունակությունը
- Համբերություն
- Միասին ընդունած կանոնները և որոշումները հարգելը
- Փաստարկներ բերելու, դրանք մեկնաբանելու, հիմնավորելու ունակությունը
- Խմբի անդամների նկատմամբ հարգանքը
- Խմբի մաս լինելու գիտակցումը և խմբի համար պատասխանատվություն կրելը
- Պատասխանատվություն կատարած աշխատանքի համար

Խմբային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

Խմբային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցությունը ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

1.1 Խմբային աշխատանքը որպես համագործակցային ուսուցում

Վերջին տասնյակ տարիներին հետազոտություններ են արվել համագործակցային ուսուցման մեջ։ Հետազոտություններից պարզ դարձավ, որ համագործակցային ուսուցումը ունի մի շարք առավելություններ. աշակերտները սովորում են համագործակցել, ինչքան ավելի շատ են սովորում այնքան ավելի լավ են հասկանում, ավելի լավ են հիշում սովորած նյութը, բացահայտում են իրենց կարողությունները և կրթությունը ավելի է հեշտանում։

Համագործակցությունը ինքնին բերում է խմբային աշխատանքի։ Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է, որը ենթադրում է խմբային աշխատանքի նոր մշակույթ։ Խմբային աշխատանք իրականացնելիս անհրաժեշտ է առանձնացնել համագործակցային ուսուցման հետևյալ տեսակները՝

1. **Դրական փոխկապվածությունը՝** խմբում միմյանց օգնելու և ոգևորելու հատկանիշները

2. **Դեմ առ դեմ խթանող փոխազդեցությունը՝** խմբի անդամները փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ, վերլուծում դրանք, ապահովում հետադարձ կապ

3. **Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն՝** խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու հարցերին և կարծիքներ փոխանակելու՝ կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար։

4. **Սոցիալական հմտությունների ձեռքբերում՝** ձևավորել վարքագծային նորմեր. անաղմուկ աշխատել, հետևել խոսողին, ներդրում անել աշխատանքին։

5. **Խմբային գործընթաց՝** խմբի անդամների հաջողությունները, փոխհարաբերություն-ները, համագործակցության բարելավումը զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը։

Համագործակցային ուսուցումը կարող է ձևավորել հետևյալ տեսակի խմբերը՝

1. Ֆորմալ խմբեր։ Այս խումբը բաղկացած է 4-5 անդամից։ Խմբի անդամները կազմում են առաջադրանքը և ներկայացնում։ Խմբի մեկ անդամ ներկայացնում է աշխատանքը, մնացածները քննարկում են լուծումները և ամփոփում հաշվետվությամբ։

2. Ոչ ֆորմալ խմբեր։ Այս խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, հիմնականում ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու ուսուցանվող նյութի վրա, դիդակտիկ նյութեր ներկայացնելու համար։

3. Հենակետային խմբեր։ Կայուն անդամներով ձևավորված խմբեր են, խմբի անդամների աշխատանքը տևում է ողջ դասընթացին։ Աշխատանքի ընթացքում խմբի անդամները միմյանց օգնում և խրախուսում են՝ նպաստելով առաջադրանքի կատարմանը և գիտելիքների ձեռքբերմանը։

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևոր է որոշել խմբերի մեծությունը։ Աշխատանքը առավել արդյունավետ է 4-5 հոգուց բաղկացած խմբերի հետ։ Յուրաքանչյուր աշակերտ անհատապես մասնակցություն է ունենում աշխատանքին, ցուցաբերում ակտիվություն։ Այսպիսի խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները՝

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն
- ձևավորում է հաղորդակցման հմտություն
- աշակերտները սովորում են միմյանցից
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար

- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները
- ընձեռում է ակտիվ մասնակցության և ինքնադրսևորման հնարավորություն

Այսպիսով խմբային աշխատանքը համագործակցային ուսուցում է, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշակերտին ակտիվ ներգրավվածություն ունենալ ուսումնական գործընթացին՝ մաս կազմել աշխատանքի, կարծիք արտահայտել, քննարկումներ անել, մասնակից լինել, պատասխանատվություն կրել կատարած աշխատանքի և խմբի աշխատանքի համար: Հետևաբար համագործակցային աշխատանքը իրենից ենթադրում է համակարգված աշխատանք, որտեղ յուրաքանչյուր աշակերտ ունի իր ներդրումը: Համագործակցությունը ձևավորում է այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ 1. Ինքնավստահություն 2. Ինքնադրսևորում 3. Խմբում աշխատելու հմտություններ

.

Գլուխ 2. Խմբային աշխատանքի ձևերը

Խմբային աշխատանքը արդյունավետ ուսուցման մեթոդներից մեկն է, որը լայնորեն կիրառվում է ուսուցիչների կողմից և դրական ազդեցություն է թողնում աշակերտների առաջադիմության վրա: Այն ավելի է մոտիվացնում աշակերտներին՝ խթանելով նրաց մտածելու կարողությանը և զարգացնելով աշակերտների համագործակցության կարողություններն ու հմտությունները:

Գոյություն ունեն խմբային աշխատանքների մի շարք ձևեր: Ստորև կներկայացնենք դրանցից առավել տարածված և արդյունավետ ձևերը:

- Մտածել, համագործակցել և ներկայացնել

Այս մեթոդը իրականանում է երեք քայլով՝

1. Յուրաքանչյուր աշակերտ անհատապես մտածում է որոշակի հարցի շուրջ և հավաքագրում իր գաղափարները
2. Աշակերտները զույգ են կազմում՝ իրենց գաղափարները կիսելու և համեմատելու նպատակով
3. Նրանց հնարավորություն է ընձեռվում կիսելու իրենց գաղափարները դասարանի հետ՝ որպես մեծ խումբ:

Այս մեթոդի գլխավոր նպատակն է բարձրացնել վստահությունն իրենց իսկ գաղափարների նկատմամբ, զարգացնել մեծ խմբի մոտ հանրային խոսքի/ելույթի հմտություններ: Այն հնարավորություն է տալիս փոխանակել միմյանց կարծիքներ:

- Ձայների շրջան

Աշակերտները կազմում են չորս կամ հինգ հոգուց բաղկացած խմբեր, որոնք կոչվում են շրջաններ: Աշակերտներին հանձնարարվում է ինչ-որ թեմա և հնարավորություն է ընձեռվում մի քանի րոպե իմի բերել մտքերը: Այնուհետև ազդարարվում է քննարկման սկիզբը. յուրաքանչյուր աշակերտ պետք է ունենա մինչև երեք րոպե խոսելու հնարավորություն: Յուրքանչյուր աշակերտի խոսելու ընթացքում որևէ մեկը խանգարելու կամ որևէ բան ասելու իրավունք չունի: Երբ բոլորը մեկ անգամ խոսում

են, պետք է ծավալել ենթախմբային քննարկում։ Հարկ է նշել, որ աշակերտներն իրենց քննարկումը պետք է ծավալեն այլոց կողմից սահմանված գաղափարների շուրջ։

Այս մեթոդի նպատակն է խթանել հանրային խոսքի և միմյանց լսելու ունակությունն աշակերտների շրջանում, ինչպես նաև ձևավորել նոր գաղափարներ, զարգացնել լսողության հմտություններ և ստեղծել բոլոր աշակերտների համար հավասար մասնակցության հնարավորություն և համագործակցային միջավայր։

- Ավտոբուսի կանգառ

Մեթոդի էությունը կայանում է նրանում, որ աշակերտները պետք է նյութն առանձին մշակելուց հետո մոտենան դասարանում ստեղծված իրենց կանգառին, որտեղ կանգնած են այլ աշակերտներ։ Դրանից հետո աշակերտները միասին քննարկում են նյութը և համեմատում իրենց աշխատանքները։

Այս մեթոդը հարմար է հատկապես այն դասարանների համար, որտեղ կան տարբեր կարողություններ ունեցող աշակերտներ։

Մեթոդի նպատակն է աշակերտների մոտ զարգացնել վերլուծական աշխատանքի և համեմատություններ կատարելու հմտություններ։

- Ձնագնդի խմբեր

Աշակերտներին տրվում է առաջադրանք, որի շուրջ նրանք սկզբում մտածում և գաղափարներ են առաջ քաշում միայնակ, այնուհետև զույգով, հետո ավելի մեծ խմբով։ Ստեղծված խումբը քննարկում է անդամների առաջ քաշած գաղափարները, քննարկում դրանք, գտնում լուծումներ և գալիս եզրահանգման։ Որքան մեծանում է խումբը այնքան ավելի է բարդանում տրված առաջադրանքը և շատանում են առաջադրվող հարցերը։ Յուրաքանչյուր խմբի կատարած աշխատանք ներկայացնում է խմբի մեկ ներկայացուցիչ։

Մեթոդի նպատակն է զարգացնել նոր գաղափարներ, պարզեցնել թեման և աշակերտների մոտ ձևավորել միայնակ որոշումներ կայացնելու հմտություններ։

- Խմբային փազլ

Այս մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտներին խորությամբ ուսումնասիրել միաժամանակ մի քանի թեմաներ։ Դասարանը բաժանվում է մի քանի ենթախմբերի, ամեն թիմին տրվում է թեմայի վերաբերյալ մի բաղադրիչ։ Թիմի անդամները քննարկում են այն մտագրոհի միջոցով, հնարավորության դեպքում՝ նաև հետազոտական աշխատանքի միջոցով։ Թեմայի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելուց հետո անհրաժեշտ է փոխել խմբերը, որպեսզի խմբի նոր անդամները նույնպես տեղեկացված լինեն թեմայի այդ բաղադրիչից։

Մեթոդի նպատակն է փորձի/գիտելիքի փոխանակումը խմբի անդամների միջև։

- Ուսուցողական թիմեր

Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ ուսուցիչը դասրանը ուսումնական տարվա սկզբին բաժանում է խմբերի։ Տարվա ընթացքում երբ անհրաժեշտություն է առաջանում կատարել խմբային աշխատանք որևէ թեմայի շուրջ այլևս անհրաժեշտություն չի լինում դասարնաը բաժանել խմբերի՝ արդեն կան ձևավորված խմբեր և աշխատանքը կազմակերպվում է հենց այդ խմբերի միջև։ Առավել արդյունավետ է դասարնը բաժանել չորս հոգուց բաղկացած խմբերի։ Մեթոդի նպատակն է խնայել ժամանակը ինչպես նաև խթանել համագործակցության մակարդակի բարձրացումը։

- Լուռ արտացոլում

Աշակերտներն ունեն որոշ ժամանակ մտածելու կոնկրետ խնդրի շուրջ և նշելու երեք ամենակարևոր դրական և բացասական կողմերը։ Առավել արդյունավետ է, եթե նրանք իրենց մտքերը գրում են կպչուն թերթիկների վրա և փակցնում գրատախտակին։
Մեթոդը խթանում է աշակերտների ինքնուրույն մտածողությունը, ակտիվացնում է պասիվ աշակերտներին, հնարավորություն տալիս արտահայտելու իրենց մտքերը, կիսվել դասընկերների հետ և ապահովում է հետադարձ կապ։

- Փուլեր

Այս մեթոդը առավել արդյունավետ է կիրառել փոքր խմբերում: Աշակերտներին նախապես տրվում է հանձնարարություն: Ուսուցիչը մոտենում է խմբերին, խրախուսում, որ աշակերտները արտահայտեն իրենց կարծիքները և պարբերաբար ավելացնում նրանց աշխատանքը՝ այն դարձնելով ավելի հետաքրքիր: Առաջադրանքները պետք է լինեն հնարավորինս կարճ: Մեթոդը հետաքրքրություն է առաջացնում աշակերտների մոտ, ինչն էլ հանգեցնում է աշխուժացման:

- Մտագրոհ

Այս մեթոդը աշակերտների մոտ զարգացնում է ստեղծագործելու հմտություն: Այն հնարավորություն է տալիս սովորողին ստեղծագործել և խթանում է գտնել խնդրի լուծումը և գաղափարներ առաջ քաշել: Նախապես սահմանեք կանոներ, գրեք դրանք գրատախտակին, ցանկալի է մեծ քանակությամբ գաղափարների սահմանում, որպեսզի բոլոր աշակերտները իրենց ներդրումը ունենան: Առավել արդյունավետ են արագ և կարճ պատասխանները: Գաղափարները չպետք է ունենան կողմնակի մեկնաբանություններ և պիտակավորումներ՝ դրական թե բացասական ձևակերպումներով:

- Ուիլյամները

Դասարանը բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբին տալ տարբեր իրավիճակային առաջադրանքներ: Առաջադրանքները չպետք է լինեն պարզունակ: Դրանք ցանկալի է լինեն բարդ: Խմբերին տրամադրվում է ժամանակ այդ իրավիճակների լուծումները գտնելու համար: Առաջադրանքի վերջում խմբերը ներկայացնում են իրենց լուծումները, մյուս խմբերը կարող են հարցեր տալ: Առաջադրանքը ամփոփվում է պատասխանելով ուսուցչի հարցերին:

2.1 Խմբային աշխատանքի առավելություններն ու թերությունները

Խմբային աշխատանքը ուսումնական գործընթացի հիմնական մասն է կազմում և այն թույլ է տալիս սովորողներին ուսումնասիրել բարդ առաջադրանքներ, որոնք նրանք մենակ չեն անի: Այսինքն՝ խմբային աշխատանքը խթանում է սովորողների նոր մտածելակերպը, զարգացնում նրանց քննական դատողությունը: Աշակերտները ձեռք են բերում խմբում աշխատելու հմտություններ: Սակայն յուրաքանչյուր աշխատանք կազմակերպելիս այն ենթադրում է մի շարք առավելություններ և թերություններ: Խմբային աշխատանքը նույնպես ունի իր առավելությունները և թերությունները:

Խմբային աշխատանքի առավելություններն են՝

1. Հնարավոր է իրականացնել ցանկացած թեմա ուսումնասիրելիս

2. Կիրառելի է դասի տարբեր փուլերում

3. Զարգացնում է աշակերտների մտահորիզոնը

4. Սովորում են համագործակցել և հաղթահարել կոնֆլիկտները

5. Ձևավորում է միմյանց լսելու կարողություն

6. Աճում է կրթական և ճանաչողական մոտիվացիան

7. Փոխադարձ ուսուցում

Թերություններն են՝

1. Հնարավոր է կոնֆլիկտներ առաջանան խմբի անդամների միջև

2. Սովորողների անհավասար մասնակցությունը

3. Հնրավոր է աշակերտները խուսափեն առաջադրանքից

4. Կարող է լինել շատ ժամանակատար

Աշակերտների շրջանում կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խմբային աշխատանքը թեթևացնում է աշակերտների աշխատանքը, այն դարձնում

ավելի հետաքրքիր։ Իրենց կատարած աշխատանքը աշակերտները ավելի լավ են հիշում և հասկանում։ Յուրաքանչյուր աշխատանք կարող է լինել արդյունավետ, եթե այն կազմակերպվում է հաշվի առնելով բոլոր հնարավոր առաջացած խնդիրները։

Գլուխ 3 Խմբային աշխատանքի հնարավորություններն ու գործառույթները

Խմբային աշխատանքը ունի մեծ կրթական ներուժ։ Այն համագործակցային ուսուցում է, հաղորդակցում խմբի անդամների միջև՝ աշակերտ-աշակերտ հաղորդակցություն, աշակերտ-ուսուցիչ հաղորդակցություն։ Սովորողների մոտ ձևավորում է համագործակցելու արվեստ։ Հաղորդակցությունը անհնար է պատկերացնել առանց շարժառիթների։ Սակայն միշտ չէ հեշտ կրթական պայմաններում համագործակցության մոտիվ առաջացնել։ Այստեղ մեծ է ուսուցչի դերը. ուսուցիչը ստեղծում է համագործակցային միջավայր, որն էլ աշակերտների մոտ առաջացնում է համագործակցելու ցանկությունը։

Խմբային աշխատանքը իրենից պահանջում է աշակերտների խումբ: Այսինքն՝ աշակերտը աշխատում է ոչ թե մենակ, այլ խմբով, որն էլ հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշակերտի մասնակից լինել աշխատանքին, արտահայտելու իր սեփական կարծիքներն առաջացած խնդիրների շուրջ։ Խմբային աշխատանքը առավել արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը։ Սովորողների մոտ ձևավորում է կարծիքներ ձևակեպելու, դրանք հիմնավորելու, վերլուծելու կարողություն։ Համագործակցության արդյունքում նրանք ձեռք են բերում ինքնաճանաչման բարձր մակարդակ, քան մրցակցային կամ անհատական ուսուցման ընթացքում։

Օտար լեզվի բանավոր խոսքի ուսուցման համատեքստում խմբային աշխատանքն ունի նաև խոսքային գործունեություն՝ միաժամանակ ծանոթանալ նյութին, սովորել և ներկայացնել։ Խմբային աշխատանքը օգնում է համախմբել երեխաներին՝ պասիվ, ամաչկոտ, երկչոտ աշակերտները ներգավվում են աշխատանքի մեջ, ինչն էլ ապահովում է կրթական գործառույթը։ Այն վերահսկում է նաև աշակերտների գործողությունները ուրիշների գործողություններին օբյեկտիվ գհահատական տալու հնարավորություն, որն էլ ձևավորում է կողմնորոշիչ գործառույթ։

Գլուխ 4 Խմբային աշխատանքի գնահատումը

Մինչ խմբային աշխատանք սկսելը, ուսուցիչը բացատրում է թե գնահատման որ ձևն է իրականցվելու՝ ձևավորող թե՞ միավորային: Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչի և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գնահատման հիմնական նպատակն է՝ ստուգել սովորողների գիտելիքների մակարդակը, կարողություններն ու հմտությունները, ապահովել արժեքային որակների ձևավորումը: Գնահատումը պլանավորվում և իրականցվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին: Խմբային աշխատանքի կատարումից հետո իրականցվում է տվյալների մշակում և սովորողների կատարած աշխտանքների գնահատում: Գնահատումը նախապես ներկայացվում է:

Ով է գնահատելու՝ ուսուցիչը թե՞ խմբերը միմյանց: Ուսուցիչը գնահատում է անձամբ և հիմնավորում, խմբի անդամները գնահատում են իրենց աշխատանքը, իրենց կամ խմբի այլ անդամներին և բացատրում: Ինչն է գնահատվում՝ աշխատանքը, թե՞ արդյունքը: Գնահատվում է ոչ միայն սովորողի աշխատանքի արդյունքը, այլև այդ արդյունքին հասնելու գործընթացում կիրառված գիտելիքները, հմտությունները, կարողությունները, համագործակցային հմտությունները: Գնահատումը խթանում է խմբի աշխատանքի արդյունքը երկու տեսանկյունից՝ գնահատելով աշխատանքի վերջնական արդյունքը և սովորողների համագործակցությունը, որը տվել է այդ արդյունքը: Գնահատում իրականացնելիս կարևոր են հետևյալ սկզբունքները՝ արդարություն, հուսալիություն, հիմնավորվածություն, թափանցիկություն:

Խմբային աշխատանք կատարելիս կարևոր դեր ունի հետադարձ կապի ապահովումը, որը բարելավում է խմբային գործընթացը, ամրապնդում ձեռք բերված գիտելիքներն ու զարգացնում սոցիալական հմտությունները:

Սեփական հետազոտություն

Հետազոտական աշխատանքի ընթացքում իրականցրել եմ խմբային աշխատանքներ՝ բացահայտելու վերջինիս՝ օտար լեզվի ուսուցման ընթացքում արդյունքներն ու առավելությունները: Խմբային աշխատանք իրականցրել եմ 12-րդ տնտեսագիտական և 11-րդ հումանիտար հոսքերի դասարանների աշակերտների հետ:

Դասարանը բաժանեցի խմբերի, յուրաքանչյուր խմբում ներգրավված էին 5-6 աշակերտներ: Գրատախտակին գրեցի թեման՝ 12-րդ դասարանում՝ <<Աղտոտում>>, 11-րդ դասարանում Երևանի Օպերայի տունը և Սիդնեյի Օպերայի տունը: 12-րդ դասարանի խմբերին բաժանեցի աղտոտման տեսակների վերաբերյալ անծանոթ տեքստեր՝ <<Հողի աղտոտում>>, <<Ջրի աղտոտում>>, <<Օդի աղտոտում>>: Իրականում աշակերտների առջև բարդ խնդիր էր դրվել. տեքստը դասավորել ճիշտ հաջորդականությամբ, թարգմանել, գտնել տեքստում ընդգծված բառերի հոմանիշները կամ բացատրությունները, որոնք նշված էին տեքստի վերջում: Յուրաքանչյուր առաջադրանք ներկայացնելուց հետո, աշակերտները պետք է արտահայտեին իրենց կարծիքները, տեսակետները ինչպես նաև հնարավոր լուծումները այդ խնդիրների վերաբերյալ: Խմբերը միմյանց լսելուց հետո հարցեր էին ուղղում մյուս խմբերին: Խմբային աշխատանքը ամփոփվեց երկխոսությամբ, որտեղ պետք է ընդգրկեին ընդգծված բառերը: Աշխատանքի համար նրանք ունեին հատկացված ժամանակ: Աշակերտները իրար մեջ կատարել էին ճիշտ աշխատանքի բաշխում՝ խմբի բոլոր անդամները ներգավված էին:

11-րդ դասարանի հումանիտար հոսքում՝ խմբերը ծանոթ էին Երևանի Օպերայի տան պատմությանը: Նրանց համար անծանոթ էր Սիդնեյի օպերայի տունը: Նրանք դուրս հանեցին բոլոր նման հատկանիշները, անցկացրին զուգահեռներ, դուրս հանեցին բոլոր անծանոթ բառերը և ներկայացրին աշխատանքը: Յուրաքանչյուր խումբ մյուսին լսելով կատարում էին լրացումներ կամ հարցեր տալիս: Խմբի բոլոր անդամները ներկայացրին, թե ինչ են նրանք սովորել այդ թեմայից:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ խմբային աշխատանքը նպաստում է աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը՝ զարգացնում հաղորդակցական կարողությունները՝ գործնականում կիրառելով հարուստ բառապաշար, բանավոր խոսքում ճիշտ գործածել քերականական կանոնները, ինչպես նաև զարգացնում է լսելու կարողությունն ու քերականական մտածողությունը։

Խմբային աշխատանքը Էապես խթանեց սովորելու մոտիվացիան, սովորողների մոտ առաջացրեց հետաքրքություն և աշխատանքը լավ կատարելու ցանկություն, հատկապես մրցակցության պայմաններում, յուրաքանչյուր խումբ ձգտում էր լավագույնս ներկայանալ իրենց բովանդակությամբ։ Այն հնարավորություն է տալիս բոլոր աշակերտներին մասնակից լինելու կատարվող աշխատանքին։ Խմբային աշխատանքը ընդունվեց աշակերտների կողմից, հատկապես միմյանց հետ համագործակցելու հետաքրքրություն առաջացրեց, ինչի արդյունքում բոլորը միտված էին հասնելու իրենց առջև դրված խնդրին։

Եզրակացություն

Բոլոր ժամանակներում ուսումնական գործընթացի հիմքում ուսման մոտիվացիան է: Այն նպաստում է մտածողության ակտիվացմանը, առաջացնում է մեծ հետաքրքրություն սովորողների շրջանում: Խմբային աշխատանքի բազմազան մեթոդների կիրառումը օգնում է սովորողների հիշողության մեջ համախմբել լեզվական կառույցներ, մտածելակերպ: Այն ուժեղացնում է ուսումնական գործընթացը՝ դարձնելով այն ավելի հետաքրքիր: Աշխատանքի ընթացքում խմբի բոլոր անդամները ներգրավվում են աշխատանքի մեջ, կարողանում սահմանված ժամանակում գտնել խնդրի տարբեր լուծումներ և առաջ բերել դրանց հիմնավորումները:

Այսպիսով՝ խմբային աշխատանքները դրական ազդեցություն են ունենում ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման վրա, նպաստում օտար լեզվի զարգացմանը: Դրանք նպաստում են այնպիսի որակների զարգացմանը, ինչպիսիք են՝ համագործակցությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործությունը, համախմբվածությունը:

Հենվելով սեփական հետազոտության արդյուքների վրա՝ անհրաժեշտ է նշել, որ խմբային աշխատանքը մեծ ոգևորություն է առաջացնում աշակերտների շրջանում: Խմբի անդամները պատրաստակամորեն են մասնակցում աշխատանքին՝ նպաստելով արդյունավետ աշխատանքի կատարմանը: Յուրաքանչյուր անդամ զգում է իր կատարած աշխատանքի կարևորությունը և պատասխանատվությունը, խմբում տիրում է միմյանց օգնելու մթնոլորտ, լինում են կարծիքների փոխանակումներ, միմյանց զիջելու պատրաստակամություն: Սովորողները քերականական կանոնների և բառապաշարի ճիշտ կիրառմամբ կարողացան հստակ ներկայացնել իրենց առջև դրված խնդիրը:

Հավելված

Խմբային աշխատանքի իրականացման պլան
1. Տևողություն 45 րոպե
2. Դասի նպատակներ • կիրառել խմբային աշխատանքի մեթոդները • աշակերտների մոտ զարգացնել համագործակցությունը • զարգացնել բանավոր և գրավոր հմտությունները • հարստացնել բառապաշարը
3. Դասի ընթացքը • Դասարանը բաժանել 3 խմբերի, յուրաքանչյուր խմբին ներկայացանել իրենց թեմաները և հանձնարարել առաջադրանքները. տեքստը հավաքել ճիշտ հաջորդականությամբ, թարգմանել հայերեն, գտնել տեքստում ընդգծված բառերի հոմանիշները կամ բացատրությունները, վերարտադրել տեքստը և կազմել երկխոսություններ՝ օգտագործելով ընդգծված բառերը: Խմբերին տալ սահմանված ժամանակ աշխատանքը ավարտելու համար:
4. Խմբային աշխատանքի ներկայացում • Խմբերը ներկայացնում եմ կատարված աշխատանքը, որից հետո կատարում վերլուծություններ, հարցեր ուղղում միմյանց և փորձում գտնել համապատասխան լուծումներ:
5. Գնահատում/Ձևավորող գնահատում 6. Անդրադարձ
7. Վերջնարդյունք • Խմբային աշխատանքը դրական ազդեցություն ունեցավ սովորողների համագործակցային կարողությունների ձևավորման վրա • Նպաստեց օտար լեզվի բանավոր խոսքի զարգացմանը

• Ձևավորեց խմբում աշխատելու հմտություններ և պատասխանատվության զգացում

Խմբային աշխատանքի գնահատման սանդղակ	
1. Աշխատանքի ճիշտ կազմակերպում	2 միավոր
2. Սահմանափակ ժամանակում հասնել ցանկալի արդյունքի	2 միավոր
3. Քերականական կանոնների ճիշտ կիրառում	2 միավոր
4. Բառապաշարի ճիշտ ընտրություն և կիրառում	2 միավոր
5. Կատարած աշխատանքի ներկայացում	5 միավոր
6. Խմբի բոլոր անդամների մասնակցություն	2 միավոր

Խմբային աշխատանքի արդյունքների գնահատման թերթիկ			
	Խումբ 1	Խումբ 2	Խումբ 3
1. Աշխատանքի ճիշտ կազմակերպում	2	2	1
2. Սահմանափակ ժամանակում հասնել ցանկալի արդյունքի	1	1	2
3. Քերականական կանոնների ճիշտ կիրառում	2	2	2
4. Բառապաշարի ճիշտ ընտրություն և կիրառում	2	1	2
5. Կատարած աշխատանքի ներկայացում	5	4	5
6. Խմբի բոլոր անդամների մասնակցություն	2	2	1

Օգտագործված գրականության ցանկ

1. Օտար լեզվի ուսուցման գործընթացում հաղորդակցական առաջադրանքների Ժիլկին. ԻՅԱ-ՅԱՇ 1992 թիվ 1
2. Ս. Խաչատրյան Ուսուցման արդյունավետ հնարներ/Երևան: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020
3. Վ. Գյուլազյան,Լ. Առուշանյան,Մ. Գասպարյան, « Ուսուցչի ուղեցույց տետր»:«Օրվա դասի պլան», «Զանգակ»,Երևան,2009:
4. McCafferty S.G., Jacobs G. M., DaSilva Iddings A. C. (2006). Cooperative Learning and Second Language Teaching, Cambridge, Cambridge University Press.
5. Richards J.C. (2005). Communicative Language Teaching Today, SEAMEO Regional Language Centre.